



Ազդարարության Trumpet's Sound **փող**

55-րդ ՏԱՐԻ, ԱԲՏՐԱԼԻԱ
ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ 2024



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գուլուճեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Աղօթքի նիւթեր

- Աղօթեցէ՛ք, որ հաւատացեալները Աւետարանը քարոզելու համարձակութիւն ունենան:
- Աղօթեցէ՛ք Հայաստանի եւ Լիբանանի աղքատ ու կարիքաւոր ընտանիքներու համար:
- Աղօթեցէ՛ք սեպտեմբերին Հայաստան այցելող միսիոնարական խումբին միացող հաւատակիցներու համար, որպէսզի Տէրն օգտագործէ զիրենք Իր փառքին համար:
- Աղօթեցէ՛ք ACM-ի եւ CEF-ի ամառային բանակումներու համար: Աղօթեցէ՛ք, որ Աւետարանը յստակ ներկայացուի, եւ որ շատերը Քրիստոսին դառնան:
- Աղօթեցէ՛ք Հայաստանի մեր ծառայակիցներու իմաստութեան եւ կարողութեան համար, մինչ կը շփուին բազմաթիւ հիւանդներու եւ կարիքաւորներու հետ:

Բովանդակութիւն

Ո՞ր եւ աղբատները 3
Հովիւ՝ Հրաչ Գուլուճեան

Մարգարեութիւններ Յիսուսի մասին . . . 4
Ծորճ Հատւք

Աստուծոյ սերը, աշխարհի ատելութիւնը 7
Փօլ Ուայթիկ

Այս անգամ ալ քեզի խնայեցի 11
Քաղուած

Գերիշխան Աստուած 13
Քաղուած

ACM-ը Հայաստանի մէջ 15
Տօթթ.՝ Դանիէլ Եւյմս

Կազմի նկարը՝ Գիւմրիի երիտասարդները
Երեւանի մէջ, Մայիս 2024:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Ո՞րք են աղքատները

Մի քանի տարի առաջ, մինչ Հայաստան կը գտնուէի, մարդասիրական կազմակերպութեան ներկայացուցիչ մը հեռաձայնեց զիս ու փափագ յայտնեց Հայաստան այցելելու՝ աղքատներուն վիճակը գնահատելու համար: Ան հեռաւոր Ափրիկէէն եկաւ Երեւան:

Միասին Վանաձորի գիւղերէն մէկը այցելեցինք, որտեղ մարդիկ մետաղեայ տոմիկներու մէջ կը բնակէին: Այս տոմիկները 30 տարիէն աւելի այնտեղ են: Ատոնք ամբողջովին ժանգոտած ու քայքայուած էին: Մարդիկ կատարեալ չքաւորութեան մէջ էին:

Պայմաններուն ծանօթանալէն ետք այցելուն ըսաւ, թէ սա իր տեսած ամենավատ վիճակն էր: Չարմացած հարցուցի. «Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Ափրիկէէն եկած այցելուն այդպէս ըսէ»: Ան ալ պատասխանեց ըսելով. «Եթէ ձմեռը 30 աստիճանէն ցած է, իսկ ամառը՝ 40-էն բարձր, ապա ինչպէ՞ս կ'ապրին այս մարդիկ»:

Խնդիրը միայն Հայաստանի մէջ չէ: Ամեն գիշեր աւելի քան 800 միլիոն մարդ քաղցած կը մտնէ անկողին: Անցեալ տարի այս թիւը աւելցաւ 46 միլիոնով: Ո՞վ է պատասխանատուն: Աւստրալիոյ մէջ մենք բոլորս հարմարաւետ պայմաններու մէջ ենք, սակայն Աստուածաշունչը մեզ ի՞նչ կը սորվեցնէ, Տէր Յիսուսը ի՞նչ սորվեցուց:

Ղուկ. 16:19-31-ի մէջ կը կարդանք մեծահարուստի եւ աղքատ Ղազարոսի պատմութեան մասին: Մեծահարուստը կ'ապրէր իր պալատին մէջ եւ ամէն օր իր դարպասներուն մօտ դրուած աղքատներուն կը տեսներ: Աղքատ Ղազարոսն ամէն օր այնտեղ էր՝ յոյս ունենալով մեծահարուստի սեղանէն ընկած փշրանքներով փորը լեցնել:

Ես կը հաւատամ, որ Աստուած իւրաքանչիւր հարուստ մարդու դռան առջեւ աղքատ Ղազարոս մը դրած է: Անոնք այնտեղ են, որպէսզի մենք հոգ տանինք իրենց մասին:

Պատմութիւնը կը շարունակուի ըսելով, թէ աղքատը դրախտ գնաց, իսկ հարուստը՝ դժոխք: Ան դժոխք չգնաց հարուստ ըլլալու պատճառով, այլ քանի որ աղքատներուն երբեք հոգ չէր տարած, երբեք չէր սիրած իր եղբորը: Ան դժոխք գնաց Աստուծոյ չինազանդելու համար:

Ո՞վ է ձեր դարպասի աղբարը: Արդեօ՞ք պիտի մեկնէք օգնութեան ձեր ձեռքը: Արդեօ՞ք պիտի հետեւիք Յիսուսի պատուիրանին՝ սիրել եղբօրը անձիդ պէս:

Հ. Գ.

Մարգարեութիւններ Յիսուսի մասին.

Ան է Մեսիան

Մշխատավայրին մէջ մարդիկ յաճախ պաշտօններ ունին, ինչպիսիք են՝ տնօրէնը, դեկավարը կամ տեղակալը: Չարլզ III-ը, նախագահ Պայտնը եւ Թութանխամոն փարաւոնը յայտնի են որպէս թագաւոր, նախագահ եւ փարաւոն:

Արդեօ՞ք գիտէիք, որ Յիսուսը աշխատանքային պաշտօն ուներ: Այն էր խաչին վրայ դրուած գրութիւնը չէր. «Ասիկա է Յիսուս, Հրէից թագաւորը»: Ան ճանչցուած էր, որպէս Բրիստոս, Մեսիա կամ Օծեալ:

Հին Կտակարանին մէջ, երբայերէն «օծել» բայը, կը նշանակէր՝ ինչոր մէկուն առանձնացնել մարգարէի, քահանայի կամ թագաւորի նման պաշտօնի համար: Օրինակ՝ Սամուէլը Դաւիթին օծեց, որպէս թագաւոր (Ա Թագ. 16:1-13): Եղիան Եղիսէին օծեց, որպէս մարգարէ (Գ Թագ. 19:16): Մովսէսը Ահարոնին ու իր որդիներուն օծեց, որպէս քահանայ (Ելից 30:30, Ղեւ. 8:10-12): Օծողը ձիթապտուղի անուշահոտ իւղը կը թափէր օծեալի գլխուն վրայ (Ելից 30:22-32), որպէսզի ցոյց տար, թէ օծեալը առանձնացուած կամ սրբուած է Աստուծոյ ծառայելու համար: Այնուհետեւ օծեալը կը խօսէր, կը ծառայէր կամ կը դեկավարէր, որպէս Աստուծոյ ներկայացուցիչը ժողովուրդին մէջ: Օծութիւնը հանրային արարողակարգի մաս կը կազմէր, որու ընթացքին բոլոր ներկաները կը հասկնային, որ Աստուած ընտրած է այս մարդուն յատուկ առաջադրանքի մը համար: Դաւիթը մերժեց Սաւուղին վնասել, քանի որ Սաւուղը «Տէրոջը օծեալն էր» (Ա Թագ. 24:6-7):

Օծուողը «օծեալ» կը կոչուէր: Անգլերէն «Messiah» բառը երբայերէն «օծեալ» գոյականէն կը սերի:

Դան. 9:25-26-ի մէջ կը կարդանք, որ Դանիէլը Գաբրիէլ հրեշտակապետի կողմէն յայտնութիւն մը ստացաւ գալիք իշխանի մասին, որը «Օծեալ» կամ «Մեսիա» պիտի կոչուի, եւ որը մահապատժի պիտի ենթարկուի: Անգլերէն «Christ» բառը յունարէն «օծեալ» գոյականէն կը սերի: Այսպիսով, Օծեալ, Մեսիա եւ Քրիստոս բառերը նոյն նշանակութիւնն ունին:

Երբ Յիսուսը Նազարէթի մէջ էր, Ան կարդաց Եսայեայ 61:1-2ա հատուածը. «Տէրոջը Հոգին իմ վրաս է. վասն զի զիս օծեց աղքատներուն անտարան քարոզելու, զիս որկեց կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, զերիներուն ազատութիւն եւ կոյրերուն տեսութիւն քարոզելու, հարստահարութիւն կրողները ազատելու, Տէրոջը ընդունելի տարին քարոզելու» (Ղուկ. 4:16-21): Այնուհետեւ Յիսուսը ըսաւ. «Այսօր այս գրուածը կատարուեցաւ ու ձեր ականջները լսեցին»: Ան Եսայեայի մարգարէութեան այս հատուածը Իրեն վերագրեց: Ան ըսաւ, թէ Ինքն է այդ Օծեալը, որու մասին նկարագրուած է Եսայեայի մարգարէութեան մէջ, որպէս Մէկը, ով կարող է լուծել իրենց բոլոր խնդիրները: Ան նաեւ Սամարացի կնոջը ըսաւ, որ Ինքն է խոստացուած Մեսիան (Յովհ. 4:25-26): Ի հարկէ, Ան իւրով օծուած չէր, այլ՝ Սուրբ Հոգիով (Գործք 10:37-38):

Եւ Յիսուսը, եւ՝ Պօղոսը Հին Կտակարանի գրութիւններէն սորվեցուցին, թէ Յիսուսն է այն Մեսիան, որը պետք է մահանար ու մեռելներէն յարութիւն առնէր (Ղուկ. 24:46, Գործք 17:2-3): Երբ Պետրոսը յայտարարեց, որ Յիսուսը Քրիստոսն է (կամ Մեսիան), Տէրը հրամայեց աշակերտներուն՝ ոչ մէկուն չըսել, քանի որ հրեաները առաջնորդ կը փնտռէին, որպէսզի իրենց ազատէր հռովմէացիներու լուծէն: Փոխարէնը, Յիսուսը Ինքն Իրեն ճանչցուց որպէս Մարդու Որդի: Բայց աւելի ուշ՝ դատավարութեան ժամանակ, Յիսուսը քահանայապետին ըսաւ, թէ Ինքը Մեսիան է (Մարկ. 14:61-62):

Յիսուսը կատարեց մարգարէի, քահանայի եւ թագաւորի պաշտօնը: Իր պաշտօնը աստուածային կերպով նշանակուած էր: Որպէս Մարգարէ, Իր ուսմունքը Հայր Աստուծմէ էր (Յովհ. 7:16): Որպէս քահանայ, Ան հաշտեցուց մեզ Աստուծոյ հետ ու հիմա կը բարեխօսէ մեզի համար (Եբր. 7:21): Որպէս Թագաւոր, Ան կ'իշխէ Աստուծոյ աջ կողմը նստած (Փիլիպ. 2:9-11): Իր դերը նախանշուած էր Հին Կտակարանի

Իսրայելի մարգարէներու, քահանաներու եւ թագաւորներու կողմէն:

Մեսիան օծուեցաւ նախելառայ՝ Իր ժողովուրդը իրենց մեղքերէն ու Սատանայէն փրկելու համար (Յովի. 8:31-36): Ան իրագործեց այս փրկութիւնը Իր մահուամբ ու յարութեամբ (Յովի. 12:32, Յովի. 3:16): Ապագային, Ան պիտի ազատէ Իր ժողովուրդը իրենց ֆիզիկական թշնամիներէն, երբ երկրի վրայ հաստատէ Իր թագաւորութիւնը (Եսայեայ 9:1-7):

Հին Կտակարանին մէջ կը կարդանք, որ Մեսիան խոստում ունի Իսրայելը վերականգնելու եւ ողջ աշխարհի վրայ արդար թագաւորութիւն հաստատելու, որը պիտի ղեկավարուի Դաւիթի սերունդի կողմէ (Երեմ. 33:6-26): Քրիստոսի երկրորդ գալստեան եւ Հազարամեայ թագաւորութեան ժամանակ Անոր դերը, որպէս Թագաւոր ակնյայտ պիտի ըլլայ բոլորի համար:

Աղօթք

Հայր Աստուած, շնորհակալութիւն կը յայտնենք Հին Կտակարանի մարգարէներուն, քահանաներուն, թագաւորներուն եւ Մեսիայի խոստման համար, ով իրականացուց այդ պաշտօնները: Շնորհակալ ենք, որ Յիսուսին ղրկեցիր՝ որպէս Օծեալ, Մեսիա եւ Քրիստոս. Ան եկաւ, որպէսզի հոգեւորապէս փրկէ մեզ՝ Իր վրայ առնելով մեր արժանի պատիժը: Ասիկա բարի լուր ու փրկութիւն է բոլորիս համար: Մենք շնորհակալութիւն կը յայտնենք Քեզ, որ Ան այս աշխարհ եկաւ, որպէս Մարգարէ եւ Քահանայ, եւ խոստում ունի օր մը ետ վերադառնալու, որպէս Թագաւոր: Փառք կուտանք Քեզ, որ կարող ենք ծառայել Իրեն այսօր, որպէս մեր կեանքի Տէրը: Քրիստոսի անունով, Ամէն:

Ճորն Հաուք



«Ամենքդ մէկ մտքի վրայ եղէք, կարեկից, եղբայրասէր, ողորմած ու քաղցրաբարոյ: Չըլլայ որ չարութեան փոխարէն չարութիւն հատուցանէք կամ նախատիւնքի փոխարէն՝ նախատիւնք, այլ ընդհակառակն՝ օրհնեցէ՛ք, գիտնալով որ այս բանին համար կանչուեցաք, որպէսզի օրհնութիւն ժառանգէք»:

Ա Պետ. 3:8-9

Աստուծոյ սէրը, աշխարհի աստելութիւնը

Յովհ. 15

Եկէք յիշենք Յովհաննէսի՝ իր նամակները եւ իր Աւետարանը գրելու նպատակը. «Այս բաները գրեցի ձեզի՝ որպէս զի գիտնաք թէ յաւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ Որդիին անունին կը հաւատաք»: Աստուած Իր մեծ սիրոյն համար Յիսուսին դրկեց, որպէսզի փրկէ, վերականգնէ ու առաջնորդէ մեզ: Այս գլխուն մէջ Յովհաննէսը կը խօսի երեք յարաբերութիւններու մասին՝ որոնք եւ ճիւղերը, բարեկամները եւ վկաները:

Որո՞ք եւ ճիւղեր

Որո՞ք Իսրայէլի խորհրդապատկերն էր, բայց գրեթէ միշտ՝ անհաւատարիմ Իսրայէլի խորհրդապատկերը: Այս որո՞ք յատուկ էր Աստուծոյ համար: Եսայեան կը նկարագրէ այն, որպէս «*ընտիր որո՞ք*» (Եսայեայ 5:2): Բայց Երեմիան տեսաւ այն, որպէս «*վայրերի որո՞քի անպիտան ճիւղերու պէս*»: Աստուած նպատակ ունէր այս որո՞քի համար: Սաղմոս 80:8-ը կ'ըսէ. «*Եզիպտոսէ որո՞ք մը փոխադրեցիր*», բայց 16-րդ համարին մէջ կ'ըսուի. «*Կրակով այրուած ու կտրուած է*»: Սակայն, իրականութեան մէջ, Յիսուսն է ճշմարիտ, իրական, իսկական որո՞քը, ի տարբերութիւն հրեայ ազգին: Այս գլխուն մէջ Տէր Յիսուսն Իր հետեւորդներուն կ'ըսէ, թէ պարզապէս այս ազգին պատկանելով չէք կրնար փրկուիլ: Միայն Յիսուսի հետ անձնական յարաբերութիւնը կը փրկէ անձին: Մտածէք Յիսուսի բոլոր «Ես եմ»-ներու մասին. Ես եմ Բարի Հովիւր, Կենաց հացը, Աշխարհի լոյսը, յաւիտենական Կեանքի դուռը, յարութիւնը եւ կեանքը, ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը: Ան ամէնն է Իրեն ընդունողի համար: Փրկութիւնն ու կեանքի իմաստը միայն Իր մէջ է:

Այժմ ուշադրութիւն դարձուցէք 2-րդ եւ 5-րդ համարներուն: Մենք այս որո՞քի մէկ մասն ենք: Որո՞քը, որեւէ մէկ որո՞ք, ինչպէս նաեւ այս որո՞քը, մեծ ուշադրութեան կարիք ունի: Խտադողի որո՞քը շատ փարթամ ու գեղեցիկ տերեւներ ունի, բայց նման խտութեան մէջ, տերեւները օգուտ չեն բերեր: Անոնք գրաւիչ տեսք ունին, բայց կը ծածկեն այն ծա-

դիկները, որոնք պտուղ պէտք է տան՝ արեւի ճառագայթներուն հանդիպելու ատեն: Խաղողագործը պէտք է մաքրէ որթը, որպէսզի այն պտուղ տայ: Սա քրիստոնէական կեանքի այլաբանութիւն է, որը կը մատնանշէ Փրկչի հետ մեր ունեցած փոխարարելութիւնը: Ան պէտք է կտրէ ու մաքրէ մեզ: Այս աշխարհի մէջ ապրելով, մեր կեանքերը շատ բաներ կ'արտադրեն, որոնք լաւ կը թուան, նոյնիսկ գրաւիչ, բայց իրականութեանը մէջ կը խանգարեն մեր հոգեւոր աճին ու օգտակար չեն Վարդապետին: Այսպիսով, Տիրոջը մօտ մնալը հրամայական է:

4-րդ համարին մէջ այսպէս կը կարդանք. *«Իմ մէջս կեցէք, ու Ես ձեր մէջ»*: Սա լիարժէք քրիստոնէական կեանքի գաղտնիքն է: Յիսուսը մեր օրինակն է: Ուշադրութիւն դարձուցէք, թէ որքան յաճախ Ան կ'առանձնանար Իր Հօր հետ հաղորդակցուելու համար: *«Ու Ինք աւնայատ տեղեր կը քաշուէր եւ աղօթք կ'ընէր»* (Ղուկ. 5:16): Սուրբ Հոգին Անոր վրայ իջաւ այնպիսի ձեւով մը, որ ուրիշի մը վրայ երբեք այդպէս չէր եղած, այնուամենայնիւ, Ան կարիք ունէր Իր Հօր հետ յաճախակի առանձնանալու: Մենք պէտք է մեր կեանքն այնպէս դասաւորենք, որ ամէն օր կարողանանք ժամանակ տրամադրել աղօթքին, Անոր Խօսքը կարդալուն եւ Անոր առջեւ լուռ մնալուն:

9-10 համարներուն մէջ կը կարդանք Որդու հանդէպ Հօր սիրոյ, եւ Իր եղբայրներու հանդէպ Որդու սիրոյ մասին: Այնուհետեւ 11-րդ համարին մէջ կը տեսնենք, թէ ինչու Յիսուսը այդպէս ըսաւ: Կայ երկու պատճառ.

Առաջին՝ որպէսզի ուրախութիւն ունենանք: Գուցէ լսած էք Ուիլյամ Ուիլպերֆորսի մասին, ով պայքարած էր սոցիալական արդարութեան բազմաթիւ խնդիրներու համար եւ իր կեանքի 46 տարին նուիրած էր ստրկութեան վերացմանը Անգլիայի մէջ: Ան կը տառապէր աչքի թուլացնող հիւանդութիւնէ մը: Ան նաեւ ողնաշարի թերութիւն ունէր, եւ ստիպուած մետաղեայ ամրակ կը կրէր իր գլուխը բարձր պահելու համար: Մակայն այդ բոլորով հանդերձ իր դէմքէն ուրախութիւն կը ճառագայթէր: Իր յուղարկաւորութեան ժամանակ Ժոզեֆ Պրատունն ըսաւ. *«Ան շատ կենսուրախ քրիստոնէայ էր... անոր արեւը միշտ կը փայլէր»*:

Երկրորդ՝ որպէսզի սիրով աշխարհ երթանք: Սա ուրիշներու համար գոհաբերող սէր է, ինչպէս Յիսուսի սէրը: Մենք պէտք է աշխարհ երթանք ու պտուղ բերենք: Մենք պէտք է այնպիսի հաղորդակցութեան

մէջ ըլլանք Անոր հետ՝ Հօր միջոցով, որ Ան կարողանայ մեր կեանքն Իր համար օգտակար դարձնել: Մենք մնայուն պտուղ կը բերենք: Մենք սա պէտք է խնդրենք Իրմէ, եւ սա այն է, ինչ Ան կը խոստանայ տալ: Ծառայութեան մէջ մենք պէտք է Իր գործընկերները ըլլանք, Իր դեսպանները, մարդիկ, որոնց Ինքը ուղարկած է:

Բարեկամներ (հմր 14)

Բարեկամները մուտքի իրաւունք ունին: Հին աշխարհին մէջ ստրուկը չէր կրնար իր տիրոջը մօտենալ: Աբրահամը Աստուծոյ բարեկամն էր (Բ Մնաց. 20:7): Յորը Աստուծոյ հետ մտերմութեան մասին խօսեցաւ (29:4): Ան նաեւ գիտէր, որ Աստուծոյ մօտ Բարեխօս մը ունի, ով իր բարեկամն է: Մովսէսը Աստուծոյ հետ կը խօսէր «ինչպէս մարդ մը իր բարեկամին հետ կը խօսի» (Ելից 33:11), թէւ ան ինքզինք Տէրոջ ծառայ կոչեց (Բ Օր. 34:5):

«Ո՛չ թէ դուք զիս ընտրեցիք, հասցա ե՛ս ձեզ ընտրեցի ու դրի ձեզ որպէս զի դուք երթաք եւ պտուղ բերէք» (16): Մենք ընտրուած ենք ոչ թէ մեր, այլ Իր եւ աշխարհի համար՝ որպէս Իր դեսպաններ: Արթուր Թագաւորի կյոյր սեղանին արժանացած ասպետները ոչ թէ արքունիքի շքեղութիւնը վայելելու համար են, այլ իրենց տիրոջ համար սիրագործութիւններ կատարելու համար: Ասիկա կը վերաբերի նաեւ մեզ, ովքեր Աստուծոյ գործին ու Տիրոջ ծառայութեանը կանչուած են: Դարձեալ կարդացէ՛ք 16-րդ համարը:

«Եթէ աշխարհ ձեզ կ'ատէ ...» (18): Մեր բոլոր ըսածը ոգեշնչող ու մարտահրաւէր պարունակող կոչ է: Բայց իրականութիւնն այն է, որ մարդիկ միշտ ընդդիմացեր են Աստուծոյ կոչին: Երբ Յովհաննէսը գրեց Յիսուսի այս խօսքերը, ան շատ լաւ գիտէր, թէ որքան ճշմարիտ էր սա Հռովմի իշխանութեան ներքոյ գտնուող քրիստոնեաներու համար: Յիսուս ըսաւ. *«Եթէ աշխարհ ձեզ կ'ատէ, զիսցէ՛ք թէ ձեզմէ առաջ զիս ստեղծ»* (Յովհ. 15:18): Եւ չկար Յիսուսին ասելու որեւէ պատճառ: Այն իրականացումն է Հին Կտակարանի մարգարէական խօսքին. *«Առանց պատճառի զիս ստողները աչքով նշան թող չընեն»* (Մաղ. 35:19): *«Առանց պատճառի զիս ստողները գլխու մագերէն շատ են. զիս փունտեղ կորսնցնող թշնամիներս զօրացան: Այն բանը որ չէի յափշտակած, ստիպեցին որ վճարեմ»* (Մաղ. 69:4):

Հռովմէացիները քրիստոնէաներուն կ'ատէին, քանի որ անոնք աւելի բարձր հաւատարմութիւն կը ցուցաբերէին Քրիստոսին, քան Հռովմին: Անոնք չէին հրաժարուիլ իրենց պարտաւորութիւններէն՝ որպէս քաղաքացիներ, բայց աւելի բարձր հաւատարմութիւն կը պահպանէին Քրիստոսի հանդէպ: Հռովմին հաւատարիմ ըլլալը ամենաբարձր բարիքն էր: Հռովմը ժողովուրդէն հաւատարմութիւն չէր պահանջէր, այլ ժողովուրդը այդպէս կը վարուէր, քանի որ Հռովմը իրենց խաղաղութիւն, օրէնք, անվտանգութիւն եւ բարգաւաճում բերած էր: Բայց աւելի ուշ կայսրերը իրենց ձեռքերուն մէջ վերցուցին այս իշխանութիւնը: Անոնք կը պահանջէին, որ ժողովուրդը իրենց համարեն, որպէս Հռովմի ոգին մարմնաւորող անձիք, եւ երկրպագեն իրենց, որպէս Հռովմի աստուածներ: Իւրաքանչիւր հռովմէացի իր ստորագրութեամբ կը հաստատէր այս գաղափարը՝ խունկ մատուցելով կեսարին ու արտասանելով «Կեսարը Տէրն է» խօսքը: Բացի այդ, իւրաքանչիւր անձ ազատ էր երկրպագելու որու որ ցանկանար: Բայց ոչ մէկ քրիստոնէայ այդպէս չէր ընէր: Թերեւս այսօր ալ այդպէս է: Մեզ կը հրապուրեն ընդունելու, որ տնտեսագիտութիւնը եւ ժամանակի հոսանքի հետ ընթանալը մեզ համար փրկութիւն է: Բայց ոչ մէկ քրիստոնէայ չի կրնար համաձայնիլ այս մտքին: Հալածանքը միշտ կուգայ, երբ անձը Յիսուսին առաջին տեղը կը դնէ իր կեանքին մէջ:

Եւ ի հարկէ, հասարակութիւնը չհասկցաւ Քրիստոսի հաւատքը, ուստի հաւատացին ասեկոսներուն ու սխալ պատկերացում ունեցան քրիստոնէաներու մասին: Ով տարբեր գաղափար ունէր կը բախուէր ընդդիմութեան: Չոնաս Հէնուէյն առաջին մարդն էր, ով Լոնտոնի մէջ հովանոց օգտագործեց, եւ իրեն ծաղրեցին ու հետապնդեցին այս բանն ընելու համար: Աշխարհը կ'ատէ տարբերուիլը: Աշխարհը կ'ատէ անհամապատասխանութիւնը, եւ Յիսուսը ճիշդ այդ բանին կը կանչէ մեզ: Մարդիկ կ'ատեն բոլոր անոնց, որոնք կարծես թէ իրենցմէ աւելի լաւ կեանքով կ'ապրին: «Ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք», կ'ըսէ Հայրը: Իսկ սուրբ կը նշանակէ տարբեր, յատուկ նպատակ ունեցող, ընդհանուր կեանքէն տարբերուող: Յովհաննէսը կ'ըսէ մեզ՝ կամ Քրիստոսը, կամ աշխարհը: Երկուքը միասին կարելի չէ:

Վկաներ (հմբ 26)

Սա մեր պատասխանատուութիւնն է՝ Հոգիի զօրութեամբ: Յիսուսը

Հօր կողմէն Իր Հոգին դրկեց, որպէսզի մենք կարողանանք վկայել: Սուրբ Հոգին կը վկայէ Յիսուսի մասին ճշմարտութիւնը, քանի որ Ան Յիսուսի Հոգին է մեր մէջ: Ան կուգայ մեզի, երբ մենք Քրիստոսին կը նուիրուինք: Հռովմ. 8:9-11-ը կը սորվեցնէ, Քրիստոսին ունենալ կը նշանակէ Հոգին ունենալ մեր մէջ: Ահա թէ ինչու կ'ուզենք Յիսուսի մասին վկայել: «*Բայց հաւատքին նոյն հոգին ունինք, ինչպէս գրուած է. «Հաւատացի, անոր համար խօսեցայ»*» (Բ Կորնթ. 4:13): Ինչո՞ւ պէտք է պատմենք Յիսուսի մասին: Պարզապէս այն պատճառով, որ մենք ճանչցած ենք զինք. «Վասն զի սկիզբէն ի վեր ինձի հետ էք»:

Սա է Տէր Յիսուսի հետ մեր ունեցած յարաբերութիւնը. մենք Անոր կեանքին մաս կը կազմենք, Անով կ'աճինք, Իր բարեկամն ենք եւ Իր բարութեան ու ողորմութեան վկան:

Տօքթ.՝ Փօլ Ուայթինկ

Այս անգամ ալ քեզի խնայեցի

«Ահա մենք քեզի կուգանք, քանզի Դուն մեր Տէր Աստուածն ես»
(Երեմ. 3:22)

Չարս Ուէյլէնտ, 60 տարեկան ծերունի մը, իր կեանքին մեծ մասը ծովու վրայ անցուցեր էր: Սա անաստուած ընտանիքի մը մէջ մեծցած էր եւ պատանեկութեան ընկերները սխալ ճամբաներու առաջնորդած էին զինքը: Չմռան գիշեր մը իր ձկնորսական նաւը, որ ծովեզերքէն շատ հեռացած չէր, տարօրինակ փոթորիկի մը հանդիպեցաւ: Այնքան սաստիկ կը փչէր հովը եւ այնքան սարսափելի էին նաւուն զարնուող ալիքները, որ Ուէյլէնտ ամբողջ կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով գիտցաւ թէ ինչ է վախնալ: Երբ դեկանիւին վրայ կը կենար եւ ամէն ջանք ի գործ կը դնէր, որպէսզի նաւուն զլուխը դէպի հովը դարձնէ, մեծ ալիք մը եկաւ եւ սաստկութեամբ զարնուեցաւ նաւուն եւ Ուէյլէնտ առաւ նետեց ծովուն ջուրերուն մէջ:

Բոպէ մը վերջը Ուէյլէնտ իր կեանքին համար կը մաքառէր ծովուն մէջ: Լողալ անկարելի էր, քանի որ ալիքները սպաննելու համար կը ծեծէին զինքը: Քիչ յետոյ զարմանալի դիպումաձքով մը ալիքները զինքը

տարին տեղ մը՝ ուր կը կենար նաւէն կախուած պարան մը: Իր յուսահատական ջանքերով բռնեց պարանը եւ անոր փայթուեցաւ իր կեանքին ազատման իբրեւ միակ միջոց: Երբ բռնած էր պարանը, մեղմ ձայն մը լսեց որ իրեն կ'ըսէր. «Այս անգամ ալ քեզ խնայեցի»: Բառերը այնքան յստակ էին, որ շարունակ կը կրկնուէին անոր մտքին մէջ: Երբոր փոթորիկը վերջացաւ եւ իրենք նաւահանգիստը հասան վերջապէս, այս բառերը շարունակեցին հնչել իր ականջներուն եւ սրտին մէջ. «Այս անգամ ալ քեզ խնայեցի»:

Երբ ցամաք ելան, լսեց որ երկու ձկնորսի նաւակներ ընկղմած եւ անոնց նաւաստիները կորսուած էին ծովուն ջուրերուն մէջ: Երբ դէպի տուն կ'երթար այնպէս կը թուէր թէ ատիկ բարձր կը հնչէր այն ձայնը, որ կ'ըսէր. «Այս անգամ ալ քեզ խնայեցի»:

Անոր ընկերներէն ոմանք գինետուն հրաւիրեցին զինքը, որպէսզի իր ազատման համար ուրախութիւն ընեն: Սակայն անիկա գինետուն չգնաց: Բան մը, գոր չէր կրնար նկարագրել, հոգեւոր ժողովի մը ամաչնորդեց իր քայլերը: Ծիշդ հոն, աղօթողներու այդ խմբակին մէջտեղը ոտքի վրայ կեցաւ եւ իր ազատման զարմանալի պատմութիւնը պատմեց եւ կրկնեց այն բառերը, որոնք կը հնչէին ականջին: Յետոյ հասկըցաւ, թէ Աստուած էր որ ազատեց զինքը եւ Աստուծոյ ձայն էր այն, որ եկաւ իրեն ծովուն ջուրերուն մէջ:

Անոնք միատեղ աղօթեցին: Աստուածավախ այդ փոքրայթիւ խումբը եւ Չարլս Ուէյլէնտ այն գիշեր հասկցաւ Աստուծոյ սէրը եւ Տէր Յիսուս Քրիստոսի ձրի շնորհքը: Առաջին անգամ ըլլալով գիտցաւ թէ մեղաւոր մըն է ինք եւ զարմացաւ թէ Աստուած խնայած էր զինքը, երբ ուրիշներ աշխարհէ վերցուեցան:

Սիրելի՛ ընթերցող, Աստուած քանի՞ անգամներ ստոյգ մահէ ազատած է քեզ: Ի՞նչ պիտի ըլլար վիճակդ եթէ անցեալի մէջ մեռած ըլլայիր: Չէ՞ս գիտեր թէ Անիկա կ'ուզէ, որ դուն ապաշխարես Իրեն դառնաս եւ փրկուիս: Չ'ես ուզեր Իրեն դառնալ այսօր:

Քաղուած՝ «Ընտիր ժողովածու հոգեւոր պատմութիւններուն» գրքէն



Գերիշիան Աստուած

Սեպտեմբեր 11, 2003 թ.-ին Ռ-ապրիլ Մէթիուզ անունով մարդ մը, որ Վրրճիմիա նահանգը կ'ապրի, հետեւեալ պատմութիւնը բաժնեկցած է տեղական ձայնասփիւռի կայանին հետ:

«Սեպտեմբեր 11, 2001 թ.-էն քանի մը շաբաթ առաջ, գիտցանք որ տիկինս յոյ էր մեր առաջին զաւակով: Այդ շրջանին, ան փափաքեցաւ Քալիֆորնիա երթալ, քրոջը այցելելու: Երբ օդակայան կ'երթայինք, աղօթեցինք որ Աստուած ապահով ճամբորդութիւն մը շնորհէ տիկնոջս: Հագիւ «Ամէն» ըսինք, պայթիւն մը լսեցինք եւ մեր ինքնաշարժը սկսաւ ցնցուիլ, քանի որ անիւներէն մին պայթած էր: Ծուտով անիւը փոխեցի, բայց թռիչքը փախցուցինք: Երկուքս ալ շատ նեղուած տուն վերադարձանք: Քիչ յետոյ հայրս՝ որ նախապէս Նիւ Եորքի ոստիկան էր, հեռաձայնեց եւ հարցուց տիկնոջս օդանաւին թռիչքին թիւը: Երբ ըսի թէ օդանաւը փախցուցինք, ան խոր շունչ քաշեց, ապա տեղեկացուց թէ այդ նոյն օդանաւն էր Նիւ Եորքի հարաւային երկնասլաց Աշխարհի առեւտրական կեդրոնին զարնուողը: Այդքան ցնցուած էի, որ մունչ կտրեցայ: Հայրս ուրիշ լուր մըն ալ ունէր մեզի հաղորդելու: Ան կ'ուզէր աղիտեալ գօտին երթալ՝ օգնելու: «Չեմ կրնար ձեռնմալ նստիլ, պարտք կը զգամ ծառայութիւնս մատուցանելու», ըսաւ: Մտահոգ էի իր ապահովութեամբ եւ ալ աւելի, քանի որ ան երբեք իր կեանքը Քրիստոսի չէր յանձնած: Քիչ մը վիճաբանելէ ետք, գիտցայ որ անօգուտ էր խօսածս, միտքը դրած էր երթալ: Ան հեռաձայնը չզոցած ըսաւ. «Թոռնիկիս լաւ հոգ տարէք»: Ասոնք եղան հօրս վերջին խօսքերը, զոր լսեցի: Ան մեռաւ մինչ կ'օգնէր ազատագրման աշխատանքին մէջ»:

Տիկնոջս ապահովութեան ուրախութիւնը չքացաւ հօրս մահուան գուժին պատճառով: Աստուծոյ հանդէպ բարկութեամբ լեցուեցայ, նաեւ հօրս ու ինքզինքիս: Գրեթէ երկու տարի զԱստուած մեղադրեցի, որ հայրս առած էր եւ մանչուկս բնաւ պիտի չճանչնար մեծ հայրը: Նաեւ սիրտս կը ցաւէր, որ հայրս Յիսուսը չընդունած՝ անակնկալօրէն բաժնուած էր մեղմէ յաւիտենապէս:

Ապա, ասկէ երկու ամիս առաջ, բան մը պատահեցաւ, որ ամէն բան փոխեց: Մինչ տունը նստած էի տիկնոջս եւ մանչուկիս հետ, յանկարծ

դուռը զարնուեցաւ: Երբ բացինք տեսանք անձանօթ գոյգ մը, երեխայի մը հետ: Մարդը ինծի նայելով հարցուց, թէ հօրս անունը ճէյքըպ Մէթօն՝ուգ էր արդեօք: Երբ «Այո» ըսի, ան անմիջապէս ձեռքս բռնեց եւ այսպէս ըսաւ. «Յաւօք սրտի, առիթը չունեցայ ձեր հօրը ծանօթանալու, բայց պատիւ ունիմ իր որդիին հանդիպելու»: Ան յուզմունքով բացատրեց, որ իր յղի տիկինը Նիւ Եորքի Աշխարհի առեւտրական կեդրոնին մէջ կ'աշխատէր եւ Սեպտեմբեր 11, 2001 թ.-ի ահաբեկչական յարձակումէն ետք քարակոյտերու տակ մնացած էր: Հայրս էր, որ զինք գտած եւ ազատած էր: Աչքերս արցունքով լեցուեցան, երբ մտածեցի հօրս մասին, որ իր կեանքը զոհած էր այսպիսի մարդիկ փրկելու ժամանակ: «Ուրիշ բան մը եւս ունիմ ըսելիք», շարունակեց անձանօթը, «Մինչ հայրդ կը ջանար տիկինս ազատել, տիկինս վկայեց իրեն եւ զայն Քրիստոսի առաջնորդեց»: Այս լուրին վրայ սկսայ հեծկտալով լալ: Հիմա գիտեմ, որ երբ Երկինք երթամ հայրս Յիսուսի կողքին կեցած զիս պիտի դիմաւորէ եւ այս երախտապարտ ընտանիքը՝ անձնապէս շնորհակալութիւն պիտի յայտնէ իրեն:

Երբ մանչ զաւակ մը ունեցան այս գոյգը, զայն կոչեցին Ճէյքըպ, հօրս յիշատակին, որ իր կեանքը տուաւ, որ այս մայրն ու որդին ապրին:

Այս պատմութիւնը անգամ մը եւս մեզի ցոյց կուտայ, թէ մեր Աստուածը գերիշխան է եւ ամբողջ աշխարհի Կառավարիչը: Ծատ մը բաներու պատճառը պիտի չգիտնանք, երբ աշխարհի այս կողմը կը գրտնըռնինք, բայց մեր բաժինն է Ամենակալ Աստուծոյ վստահիլ ամէն պարագայի մէջ:

«Ո՛վ Տէր, աստուածներուն մէջ քեզի պէս ո՛վ կայ: Մրբութեան մէջ փառատորեալ, օրհնութեան մէջ սքանչելի, հրաշքներ ընող՝ ո՛վ կայ քեզի նման» (Ելից 15:11):

Քաղուած՝ «Օրհնաբեր նոնենին» գրքէն



«Ձեր մտքերը գօտեպնդեցէ՛ք՝ արթուն կեցած՝ կատարելապէս յուսացէք այն շնորհքին որ ձեզի պիտի տրուի Յիսուս Քրիստոսին յայտնուելու ատենը»:

Ա Պետ. 1:13

ACM-ը Հայաստանի մեջ

*«Նորածին մանուկներու պէս քանական ու անխարդախ կայթին փափաքեցէ՛ք, որպէս զի անով մեծնաք [մինչեւ փրկույթիւն]»
(Ա Պետ. 2:2)*

Փ առք կուտանք Աստուծոյ, որ տարիներու ընթացքին Աւետարանը ոչ միայն քարոզեցինք աղքատներուն, այլև շարունակեցինք շատերուն քաջալերել, մխիթարել ու հաստատել Աստուծոյ Իսօսքին մէջ:

Սոյն թուականի Մայիսի 17-ին, 14-19 տարեկան 11 Գիւմրեցի երիտասարդներ 3 օրով մեկնեցին Երեւան: Իտումբին մէջ կար 8 աղջիկ եւ 3 տղայ: Գիւմրիի մեր ծառայակիցներ՝ Աշոտն ու Յասմիկը կ'առաջնորդէին խումբը: Մարտունը, Անժէլան եւ մեր կամաւորները, Աշոտի ու Յասմիկի հետ միասին, կազմակերպեցին ու աջակցեցին այս այցելութեան իրականացմանը: Այս ճանապարհորդութեան նպատակն էր միմեանց քրիստոնէական կեանքին մէջ քաջալերելը՝ շեշտը դնելով քարոզչութեան եւ ուսուցման վրայ: Հիմնական խօսնակը Մարտունն էր: Ան երիտասարդներուն խրախուսեց քրիստոնէական աճի եւ Աստուծոյ Իսօսքի կարեւորութեան մասին խօսելով:

Իտումբի անդամները երգեցողութեամբ ու վկայութիւններով Տիրոջը ծառայեցին Երեւանի Հայ Եղբայրութեան եկեղեցիի կիրակնօրեայ պաշտամունքի ժամանակ: Անոնք այցելեցին նաեւ Երեւանի եւ յարակից տարածքներու մի քանի տեսարժան վայրեր:

Մենք նաեւ շատ օրհնուած էինք տեսնելով մէկ այլ գործունէութիւն՝ կապուած Աստուծոյ Իսօսքի կարեւորութեան հետ: Մոլտովայի մէջ գործող Christian Mission International Aid-ի մեր ընկերները Հայաստանի մէջ սկսեցին Աստուածաշունչի փոստային դպրոցի ծառայութիւնը: Երեւանի «Փարոս» շէնքի սենեակներէն մէկը տրամադրեցինք CMIAID-ին՝ այս ծառայութիւնը կազմակերպելու համար: Մենք CMIAID-ի հետ շատ սերտօրէն գործած ենք մի քանի առիթներով, եւ փառք կուտանք Տիրոջը իրենց այս ծառայութեանը համար:

Առաքելները հաւատացեալներուն կը շեշտէին Աստուծոյ Իսօս-

քի եւ վարդապետութեան կարեւորութեան մասին: Պետրոսը քաջալերեց հաւատացեալներուն «քանական ու անխաղտախ կայծ»-ին փափաքելու: Իսկ Պօղոսը Կորնթացիներուն յիշեցուց. «Եղբայրներ, չկրցայ խօսիլ ձեզի՝ որպէս հոգեւորներու, հասպա որպէս մարմնատրներու» (Ա Կորնթ. 3:1): Իսօքսի քաջալերութիւնը եական է, եւ մենք փառք կուտանք Տիրոջը, որ ACM-ը կարող է սերտօրէն համագործակցիլ տեղական եկեղեցիներու եւ այլ քոյր կազմակերպութիւններու հետ:

Շատ աղօթք պէտք է Հայաստանի երիտասարդներուն համար, մինչ անոնք կը դիմագրաւեն աշխարհի ու մարմնի գայթակորթիւնները: Մենք փառք կուտանք Տիրոջը, որ կ'օգնէ մեզ շարունակել մեր ծառայութիւնները:

Տօքթ. Դանիէլ Ճէյմս

